սեն՝ Յոյնք և Լատինք բաժանորդ են դրանս այսմիկ, եթէ Յոյնք թողուն կախել զմի կանթեղ 'ի վերայ աստիճանաց հարաւային դրան, թողումք ասա և մեք. ընդ այս յօժար էին Հայք. այլ Դատաւորն դառնացաւ յոյժ՝ թէ հարաւային դուռն միայն Յունաց սեփհական է, և Հայք չունին անդ իրաւունս. իսկ հիւսիսայինն Հայոց և Յունաց բաժանորդ գրեալ է։ Զօրացեալ Յունաց 'ի բանից աստի ընդդէմ զինեցան Հայոց, և ոչ թողին մերձենալ 'ի նոյն տեղի, նոյնպէս և Լատինք 'ի միւս կողմն։ Սաստեաց Դատաւորն Լատինաց, թէ 'ի մասինս յայսմիկ չճանաչեմ զձեզ, զի երկոքին աղգք բաժանորդ են Այրին և հիւսիսային դրան, Հայք չունին մասնակցութիւն ինչ հարաւայնոյն։ Եւ սկսան կռուիլ երեք աղգք 'ի մէջ Այրին. Լատինք ասէին՝ մեք և Յոյնք 'ի բաղում ժամանակաց հետէ բաժանորդութեամբ եւ հաստատուն պայմանաւ ունիմք զայս տեղի մինչեւ ցայսօր. իսկ Հայք որ բաժանորդ եղեն ընդ Յունաց, պարտ է առնուլ զմի մասն Յունաց և տալ Հայոց. զի երկոքեան մի օրինակ լիցին բաժանորդ, և Լատինք միայնակ երկոցունց. յուսալով թէ Հայք տիրեն միոյ բաժնին Յունաց, և ինքեանց ինչս ինչ ոչ հասանէ, բայց վրիպեալ 'ի յուսոյ անտի թշնամացան ընդ Հայս, որ յառաջագոյն իբր բարեկամ էին։ Վերստին զայրացեալ Դատաւորին 'ի վերայ Լատինաց, հրաման ետ Հայոց ըստ պատշաճի յարմարիլ և կախել զկանթեղսն, և ինքն եկ 'ի վեր. ելին և Հայք զկնի նորա աղաղակաւ, դուք հրամայէք ասեն կախել զկանթեղս, Լատինք և Յոյնք ընդդէմ կացեալ արգելուն. մնացեալ եմք տարակուսեալ թէ՝ ո՞րպիսի դատաստան իցէ այս, զպատկերս եւ զկանթեղս Յունաց ոչ տայք բառնալ 'ի հիւսիսային կողմանէ եկեղեցւոյն, զի եթէ Յոյնք կամին բաժանորդ լինել մասին այնորիկ, Հայք եւս կամին իրաւամբ բաժանորդ լինել բոլոր եկեղեցւոյն. մեք հաճեցաք տասն կանթեղաց Այրին, զմեզ լուեցուցիք բաժանորդ էք ասելով՝ զայն եւս չթողուն այժմ, զի ոչ միայն պատկերս, կանթեղս և վարագոյրս ունիմք կախել անդ, այլ և դնել 'ի խորանն զսպաս պատարագի, և մի աչտանակ 'ի յատակն՝ որպէս Լատինք և Յոյնք եղեալ են։

Կոչեաց Դատաւորն զՅոյնս եւ ասէ ցնոսա քաղցրու-